ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/04

ք. Երևան «27» փետրվարի 2026թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար Ա. Ավագյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջանիկ Սևոյան» Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Ջ. Սևոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1150000 (մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, նեևառյալ ԱԱՀ-ն:[17]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[20]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,

---

[17] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2026 թվականի հունվարի 5-ից հետո կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է[24]:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[24] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա	ՀՀ, գ. Շահումյան, Գայի 8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության	Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011288025	Հ/Հ 1930070102110100
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 37488172
Digitally signed by AVAGYAN ASHOT 3011650098 Date: 2026.03.03 10:44:14 AMT	Digitally signed by SEVOYAN JANIK 2107940215 Date: 2026.02.27 13:43:08 AMT
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«27» փետրվարի 2026թ. կնքված
***ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/04** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	72211124/1	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	դրամ	1150000	1	ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41Ա	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 31.12.2026թ.

Տեխնիկական բնութագիր

Ճարտարապետություն ունեցող էլեկտրոնային համակարգի՝ Կայքի ծրագրային մշակման (շարունակական վերամշակման) և սպասարկման ծառայություններ

ՀՀ Արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պաշտոնական կայքը գործարկվել է 2020 թվականի դեկտեմբերին: Հաշվի առնելով վերջին տարիներին պետական ծառայությունների թվայնացման ոլորտում արձանագրված զարգացումները և նոր ՀՀ հանրային ծառայությունների ստանդարտների սահմանումը, կայքի արդիականացումը դարձել է անհրաժեշտ: Միաժամանակ այս տարիներին հետևողականորեն ավելացել է կայքի մուտքերի թիվը 2020-2025 թվականների համար կայքն ունեցել է հետևյալ քանակով օգտատերեր 12.296 (2020 թվական), 326.037 (2021 թվական), 398.612 (2022 թվական), 652.230 (2023 թվական), 746.542 (2024 դեկտեմբեր), 837,043 (2025 թվական), ինչի արդյունքում կարիք է առաջացել կայքի ընդհանուր թարմացումների, օպտիմիզացիայի և շարունակական սպասարկման:
Նոր վերամշակումը պետք է կախված չլինի այլ ընդլայնումներից (cms), ապահովելով ճկուն ծրագրային կառուցվածք և համապատասխան ծրագրային ճարտարապետություն (*տարեկան նվազագույնը սպասարկելու 1 մլն օգտատեր /նկատի ունենալ, որ 2025 թվականին կայքը սպասարկել է 837,043 օգտատիրոջ/*): Լուծումը պետք է ապահովի բարձր կատարողական և ընդլայնման հնարավորություն:
Ըստ այդմ վերամշակել ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պաշտոնական կայքը այն համապատասխանեցնելով

- Ծառայությունների թվայնացման ուղեցույցի պահանջներին՝ ՀՀ հանրային ծառայությունների թվայնացման սկզբունքներին,
- «Հենակետ v.1.0»-ը ՀՀ պետական ծառայությունների պաշտոնական դիզայն համակարգին
- ՀՀ պետական կայքերի ստեղծման, կառուցվածքի և դիզայն լուծումների հավաքածու հանդիսացող «Ձևանմուշ» նմուշների գրադարանին:

Կայքը շարունակել համապատասխանեցնել նաև

- ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 26-ի «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» թիվ 1521-Ն որոշման հավելվածի համապատասխան դրույթով նախատեսված պայմաններին,
- կառուցվածքը, անվտանգությունը և այլ համակարգերի հետ փոխգործակցելիությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշման պահանջներին,
- նավիգացիան և տեխնիկական պարամետրերը համապատասխանեն 2020թ. «Պետական կառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի գնահատում. Պրոակտիվ հրապարակայնություն» զեկույցի համապատասխան բաժնով սահմանված չափանիշներին,
- Տվյալների պաշտպանության միջազգային չափանիշներին (GDPR, General Data Protection Regulation)՝ ապահովելով անձնական տվյալների պահպանման, մշակման և ջնջման իրավունքները: Թեև հարթակում օգտատերերի գրանցում չի նախատեսվում, անհրաժեշտ է ապահովել մեխանիզմ, որով ինչ-որ բաժիններում՝ իրադարձության մասնակցության համար գրանցված անձանց պահանջով հնարավոր կլինի տվյալների խմբագրում կամ հեռացում,
- Վեբ հասանելիության (WCAG 2.1 AA) պահանջների ապահովում, որպեսզի հարթակը մատչելի լինի բոլոր օգտատերերի համար, ներառյալ սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց:

Անհրաժեշտ է գործող կայքի ողջ տեղեկատվությունը (Հայերեն, Անգլերեն, Ռուսերեն) նույնական պահպանել վերամշակված նոր կայքում: Իրականացնել Ընտրացանկի նավիգացիայի համապատասխան մշակում համաձայն «Պետական կառավարման մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերի գնահատում. Պրոակտիվ հրապարակայնություն» զեկույցի:
Կայքի

- բոլոր բաժինները արտացոլում են հստակ, պարզ և հնարավորինս կարճ հասցեներ՝ հասցեագրող վահանակի վրա:
- յուրաքանչյուր էջ ունենում է իր հստակ վերնագիրը (header) և ստորագիրը (footer), իսկ դրանց բովանդակությունը ամփոփ ներկայացված է լինում յուրաքանչյուր էջում:
- յուրաքանչյուր էջի անվանումը (header) մշակված և համադրելի լինի որոնման համակարգերի համար:
- լեզուները (հայերեն, ռուսերեն և անգլերեն) չլինեն միմյանցից անկախ և առկա լինի կայքի ցանկացած էջից լեզվական տարբերակի ընտրության միջոցով համապատասխան բաժին անցնելու հնարավորություն:

Առկա կայքի ուսումնասիրության և ներկայացված կառուցվածքային առանձնահատկությամբ պայմանավորված Կայքի համար սահմանվել է ժամանակակից, պարզ լուծմամբ արտաքին էջեր, որոնք պետք է ունենան՝
Գլխավոր էջում

- Գլխագիր (header), ըստ ընտրացանկի (Menu)
- Սլայդի հնարավորություն (ֆոնային լուսանկար կամ տեսանյութ և կարճ տեղեկատվություն),
- նրան հաջորդող Նորությունների մոդուլ,
- մատուցվող ծառայություններ կամ գործառույթների մաս,

- օգտակար հղումների մաս,
- Վերջացող հատված (Footer), կոնտակտային տվյալներով

Երկրորդական էջեր
- Նորությունների բաժին,
- Տեղեկատվական բաժին
- Հրապարակումներ
- Մրցույթներ (անձնակազմի) (ֆայլային համակարգի սկզբունքով, pdf, doc)
- Հաշվետվություններ (ըստ տարեթվերի ֆայլային համակարգով, pdf, doc)

Այլ
- Օգտակար հղումներ,
- Աշխատակազմ (համապատասխան մոդուլ, ըստ որի հնարավոր կլինի ցանկացած անձի կցել համապատասխան պաշտոն, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստ, և այն կդասակարգվի ըստ պաշտոնի, հարկավոր է նաև որոշ պաշտոնների համար թողնել կենսագրություն տեղադրելու հնարավորություն),
- Մեր մասին (համապատասխան էջի ձևավորմամբ)
- Օրենսդրություն

Մինչև Կայքի վերամշակումը, Պատվիրատուին է ներկայացում նախատիպը, որը մշակվում է Adobe XD, Figma կամ համարժեք պրոֆեսիոնալ գործիքակազմով:
Կայքի «Հենակետ v.1.0»-ը ՀՀ պետական ծառայությունների պաշտոնական դիզայն նախնական փուլում համաձայնեցվում է Պատվիրատուի հետ՝ անհրաժեշտ ճշգրտումները կատարելուց հետո միայն իրականացվում նախագծման և ծրագրավորման աշխատանքները:
Անհրաժեշտ է որ
- Հարթակը համատեղելի լինի միջազգային ճանաչում ունեցող դիտարկիչների հետ,
- ապահովվի բոլոր հիմնական ֆունկցիաների և դիզայնի տարրերի ճիշտ արտացոլում դիտարկիչներում,
- ապահովի ամբողջական և հստակ դիտումը համակարգիչների տարբեր էկրաններին (Full HD, Retina, Wide-screen և այլն),
- ունենա responsive դիզայն (Mobile) և ապահովի հնարավորին կոմպակտ արտացոլում,
- օպտիմիզացված լինի touch-friendly ինտերֆեյսով՝ մոբայլ նավիգացիա, ինտերակտիվ քարտեզի շարժական տարբերակ, օպտիմիզացված պատկերներ,
- ունենա պարզ և ինտուիտիվ UI/UX, որտեղ յուրաքանչյուր բաժին հասանելի է առավելագույնը 2–3 գործողությամբ,
- ապահովվի մաքուր և պրոֆեսիոնալ գրաֆիկա, ֆոնտեր և գունային լուծումներ:

Լուսանկարների և այլ ֆայլերի կցման ավտոմատ օպտիմիզացում
Անհրաժեշտ է կիրառել ֆայլերի ներբեռնման մեխանիզմ, որը թույլ է տալիս բեռնել, օպտիմալացնել և անվտանգ պահել պատկերներն ու փաստաթղթերը՝ առանց հավելյալ գործողությունների:
Հիմնական հնարավորություններ՝
- Պատկերների ավտոմատ resize: Վերբեռնվող .jpg, .jpeg, .png, .gif պատկերները ավտոմատ կերպով նվազեցնել մինչև 1200px լայնությամբ՝ պահելով համաչափությունը: Սա թույլ է տալիս զգալիորեն կրճատել պահեստային ծավալը և արագացնել ցուցադրման ժամանակը տարբեր սարքերում:
- Մետատվյալների մաքրում (EXIF / Core XML): .jpg, .jpeg, .png նկարներից հանել ներառված մետատվյալները (EXIF, thumbnails և այլն): .docx, .xlsx ֆայլերի դեպքում Zip արխիվային կառուցվածքից ավտոմատ հեռացնել core.xml և app.xml ֆայլերը՝ անձնական կամ ներքին գրադարանային տվյալների թաքցման նպատակով:
- PDF ֆայլերի ճնշում և օպտիմալացում: Վերբեռնվող PDF ֆայլերը վերամշակել՝ կիրառելով գեներացված համապատասխանության մակարդակ, ինչը կրճատում է չափը և բարձրացնում է համատեղելիությունը տարբեր դիտարկիչների հետ:
- CSV ֆայլերից UTF-8 BOM մաքրում: CSV ֆայլերի առաջին տողից ավտոմատ կերպով հեռացնել BOM (Byte Order Mark)՝ ապահովելով մաքրություն և ճշգրտություն տվյալների ընթերցման ժամանակ:
- Անվտանգ MIME ստուգում: Ներդնել MIME ստուգման երկակի մեխանիզմ՝ ըստ ֆայլի ընդլայնման և ըստ բովանդակության՝ կանխելով կեղծ ֆայլերի կամ վնասակար ներմուծումների հավանականությունը:

Այս մեխանիզմը հասանելի է ինչպես նոր ֆայլ ավելացնելիս, այնպես էլ խմբագրման փուլում, և ավտոմատ կիրառվում է բոլոր անհրաժեշտ դեպքերում՝ առանց օգտատիրոջ միջամտության:

Ղեկավարման վահանակ
Կայքը ներառում է անհատական ճկուն ադմինիստրավորման վահանակ և տեղեկատվական տեխնոլոգիաների /SS/ ոլորտում նվազագույն հմտություններով անձանց կայքի տեղեկատվական բովանդակությունը խմբագրելու հնարավորություն, ընդ որում Կայքի տեղեկատվական բովանդակությունը խմբագրումը կատարվում է Պատվիրատուի համար մշակված Բովանդակության կառավարման համակարգի (CMS)-ի միջոցով, պարզ և հասկանալի:
Կայքի ղեկավարման վահանակի մուտքը անհրաժեշտ է ապահովել անվտանգության մեխանիզմներով՝
- Երկփուլանի նույնականացում (2FA)՝ մեկանգամյա ծածկագրի (OTP) միջոցով, որն ստացվում է էլ. փոստով կամ հաստատվում է Authenticator հավելվածով:
- IP հասցեների սահմանափակում՝ մուտքը հնարավոր կլինի միայն պատվիրատուի կողմից հաստատված IP հասցեներից:

Վահանակի միջոցով պետք է հնարավոր լինի կառավարել վերոնշյալ համապատասխան բաժինների աշխատանքը, այդ թվում փոփոխել ցանկացած էջի նյութերը, ստեղծել նորություններ, իրադարձություններ, նախագծեր, ինչպես նաև ստեղծել նոր էջեր, այլ լեզուներով համապատասխան բաժինները թարգմանելու հնարավորություն:
Կայքի էլեկտրոնային կառավարման վահանակի միջոցով հնարավոր է նաև դասակարգել menu-ի մասերը, ստեղծել աշխատակիցների անհատական էջեր, տեղակայել թափուր հաստիքների մասին հայտարարություններ՝ սահմանելով հայտարարությունների վերջնաժամկետներ, ինչպես նաև ձևավորել կայքի ցանկացած բաղադրիչի հղումներ, որոնք ավտոմատ վերափոխվում են լատինատառի, ապահովելով կայքի հղումների միասնական կառուցվածքը:

Անհրաժեշտություն է չցուցադրել այն էջերը, որոնք թարգմանված չեն, սահմանելով տվյալ էջերի համար հնարավոր լեզվի ավտոմատ թաքցման մեխանիզմ:
Ղեկավարման վահանակից հնարավոր լինի դիտել Կայքի Վիճակագրական ցուցիչները՝ այցելությունների քանակ, էջերի դիտումներ, տրաֆիկի աղբյուրներ, անհրաժեշտության պարագայում արդյունքների ֆիլտրում: Վիճակագրական ցուցիչները՝ մոնիթորինգի տվյալները անհրաժեշտ է արտացոլել Կայքի էլեկտրոնային կառավարման վահանակում, ապահովելու մեկ հարթակից դիտման հնարավորություն:

Անվտանգություն և այլ ստանդարտներ
SQL Injection, XSS, CSRF պաշտպանվածության ապահովում, անվտանգության գլխագրերի ապահովում և այլ անվտանգության միջոցառումների ապահովում: Անհրաժեշտ է կիրառել այնպիսի հնարավորություններ, որոնք կպաշտպանեն Հարթակը այնպիսի վեբ հավելվածների հարձակումներից, ինչպիսիք են օրինակ՝ էսՔյուէլ-ը (Structured Query Language-SQL), էքսէսէս-ը (Cross Site Scripting-XSS):
Անհրաժեշտ է ապահովել backup-ի հնարավորություն, ինչպես ֆայլերի, այնպես էլ տվյալների բազայի համար:
Կայքի հետ տրամադրվում է Կոմիտեի տարբերանշանի վեկտորային ձևաչափի մշակում ըստ շերտերի/ :
Կայքի հետ տրամադրվում է CMS-ի ուսուցման փաթեթ, այդ թվում հոլովակներ:
Սպասարկման ընթացքում իրականցվում է

- Կայքի սպասարկում,
- Կայքի արտաքին տեսքի և ներքին էջերի վերադասավորություն պատվիրատուի կողմից տրված առաջարկների հիման վրա,
- Կայքի ամպային տիրույթի ծրագրային սպասարկում:

ՀՀ կառավարության N 153-Ն որոշմամբ սահմանվել են պաշտոնական կայքէջերին, դրանց սպասարկմանը և անվտանգությանը ներկայացվող նվազագույն պահանջները, ինչպես նաև պաշտոնական կայքէջերը սահմանված պահանջներին համապատասխանեցնելու ժամկետ՝ մինչև 2026 թվականի հուլիսի 1-ը: Անհրաժեշտ է ապահովել նշված որոշման պահանջները առնվազն մեկ ամիս շուտ:

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա	ՀՀ, գ. Շահումյան, Գայի 8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության	Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011288025	Հ/Հ 1930070102110100
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 37488172
Digitally signed by AVAGYAN ASHOT 3011650098 Date: 2026.03.03 10:45:02 AMT	Digitally signed by SEVOYAN JANIK 2107940215 Date: 2026.02.27 13:43:43 AMT
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«27» փետրվարի 2026թ. կնքված
***ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/04** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211124/1	ցանցային, համացանցային և ներքին ծառայողական կայքի (ինտրանետի) համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ	-	287500	287500	862500	862500	862500	1092500	1092500	1092500	1150000	1150000	1150000	**1150000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

Digitally signed by AVAGYAN ASHOT 3011650098
Date: 2026.03.03 10:45:43 AMT

(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Ջանիկ Սևոյան» Ա/Ձ
ՀՀ, գ. Շահումյան, Գայի 8
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930070102110100
ՀՎՀՀ 37488172

Digitally signed by SEVOYAN JANIK 2107940215
Date: 2026.02.27 13:44:07 AMT

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«27» փետրվարի 2026թ. կնքված
***ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/04** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«27» փետրվարի 2026թ. կնքված
ՀԿԱԾ-ՄԱԾՁԲ-26/04 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն